

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ԽՕՍՔԸ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ

Շնորհակալ եմ շնորհաւորութեանց եւ բարեմաղթութեանց համար:

Կաղանդը կամ Նոր Տարին ընդհանրապէս ուրախութեան օր մըն է: Կը գոհանանք Տիրոջմէն որ անցնող տարին բոլորեցինք անփորձ ու անվստահ ու կը մաղթենք որ տարին առաջին օրը երջանիկ ու բարեյաջող տարի մը սկզբնաւորութիւնը ըլլայ բոլորիս համար:

Այս պահուս երբ աւանդական սովորութեան համաձայն համախըմբուած ենք հոս, միտով ու երեսակայութեամբ կը փոխադրուիմ տարի մը առաջուան ճիշդ այս օրը, երբ մեր յաւէտ ողբացեալ Երանաւնորհ Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հայրը բազմած էր այս աթոռին վրայ ու ես յանուն Միաբանութեան կը շնորհաւորէի զինք, եւ ընդհանուր ահեարկ մը ձգելով վերջացող տարին վրայ, խորունկ ցաւով ու դառնութեամբ կը յիշէի Ամենայն Հայոց Հայրապետին անահեակալ ու անժամանակ վախճանումով մեր կրած մեծ ու անդարմանելի սուգը: Այն ատեն, սակայն, որո՞ւ միտքէն կ'անցնէր թէ տակաւին ամիսը չբոլորած մենք ալ պիտի որբանայինք եւ դրժբախտութիւնը պիտի ունենայինք ողբալու մեր սիրեցեալ Հոգեւոր Հօր եւ Ս. Աթոռոյս բազմաւնորհ ու մեծարժէք Գահակալին առ յաւէտ բաժանումը մեզմէ:

Տակաւին երեսակայութեանս առջեւ կը պատկերանայ ինք իր արքեմի հասակով, իր վայելուչ ու շնորհալի շարժ ու ձեւերով. արքի յուզումով կը յիշեմ իր Միաբանութեանս ուղղած Նոր Տարիի պատգամը, պերն եւ իմաստալից, որ իր վերջին հայրական կտակն ու կարապի երգը պիտի ըլլար կարծես: Ինչպէս մեր գլխէն մեր պարծանաց քազն ու պսակը ու 1939 տարին իսկապէս սուգի եւ տրտմութեան տարի մը եղաւ մեզի համար:

Այդ սուգին վրայ նոր մըն ալ աւելցաւ վախճանումովը Կիլիկիոյ երջանկայիշատակ Տ. Սահակ Հայրապետին, Սուրբ Աթոռոյս երիցագոյն եւ բազմավասակ միաբանին, որ թէեւ յառաջացած ալեօք ու կրած տարիներու բեռին տակ, բայց անոր ներկայութիւնը իսկական օրհնութիւն մը եւ քաջալերանք մըն էր իր պատմական Աթոռէն կապտուած Տանն Կիլիկիոյ Հայրապետութեան եւ վայրավաթին Հայ ժողովուրդին համար:

Այսպէս վերջին փանի մը տարիներու ընթացքին մէկը միւսին ետեւէն տապալեցան Հայաստանեայց Եկեղեցիին ամուր սիւները: Մեզի կը մնայ մաղ-

քել որ ողորմի Տէրը իր այրիացեալ եկեղեցիին ու հոգեւորական նորահաս սերունդը անի ու զօրանայ իմաստութեամբ եւ հասակաւ, որպէսզի անիկա օր մը կարենայ արժանապէս լեցնել անդարձ մեկնողներու եւ մեկնելիքներուս ձգած պարապը:

Անցնող 1939 տարին ինչպէս ինչպէս մը եղաւ նաեւ այն պատճառաւ որ պատերազմի արհաւիրքներ ու տարերային աղէտներ վրդովեցին ամբողջ աշխարհի խաղաղութիւնը: Երէկուան անկախ ու բարգաւաճ ազգերը այսօր կը հեծեն բիրտ ոյժի եւ բռնութեան ծանր լուծին ներքեւ: Հզօր տէրութիւններ, սպառնալէն ու սպառնալից, կազմ ու պատրաստ են զիրար յօռնելու: Մէկ խօսքով խանգարուած եւ վերիվայր եղած է ընդհանուր ապահովութիւնը, խանգարուած է բնականոն կեանքն ու տնտեսութիւնը ու աշխարհ ամենայն անձկութեամբ եւ անհանգստութեամբ կը սպասէ այս արհաւիրքի պայքարի վախճանին, փափաքելով որ այդ պայքարը վերջանայ արդարութեան, իրաւունքի եւ ազատութեան յաղթանակով:

Տիրող տնտեսական տագնապի հետեւանմաներէն, անուշտ զերծ չէր կրնար մնալ նաեւ Ս. Աթոռ, որ մեծապէս ազդուած էր արդէն 1936-ին սկսող ու անկէ ասդին հետզհետէ Ս. Երկրին վրայ ճնշող շփոթ կացութենէն, զոր աւելի ծանրացուց ներկայ պատերազմական վիճակը:

Կը յիշեմ որ անցեալ տարի Ամանուրի առթիւ մեր հանգուցեալ Ս. Պատրիարքին ըրած ուղերձիս մէջ կ'ըսէի թէ երկարակամացած է մթնոլորտը, ու չենք գիտեր՝ անիկա պիտի պարզուի՞ թէ նորահաս անակնկալներու առջեւ պիտի դնէ զմեզ: Մթնոլորտը չպարզուեցաւ դժբախտաբար ու իրականութիւնն է այսօր պատերազմը, զոր հին տարին կը փոխանցէ նորին, որ իր կարգին գուցէ փոխանցէ նաեւ յաջորդ տարին կամ տարիներուն: Նոյն ուղերձիս մէջ կը վստահացնէի՝ թէ Միաբանութիւնը, սակայն, կազմ ու պատրաստ է դիմագրաւելու ամէն պատահականութիւն ու ամենքը, մեծերէն սկսեալ մինչեւ կիսերագոյնները, արթունաւոր ու կարգապահ ոգիով եւ սիրայօժար ու անհրճունջ պիտի մնան պատկէտին վրայ ի գլուխ իրենց պատրաստութեանց:

Այսօր գոհ եւ մխիթարուած եմ արտով, վասնզի կրնամ յայտարարել թէ չեմ սխալած նախատեսութեանս մէջ: Ճիշդ է որ ներկայ վիճակը անձկութեան մասնաձեւ է Սուրբ Աթոռը, զգալի չափով նուազած են մեր եկամուտները, որով դժուարութեան կը բախի այս բազմաճիւղ հաստատութեան մասակարարութիւնը, եւ սակայն մեր սիրելի Միաբանութիւնը եւ մեր պատեհները, Ս. Աթոռիս բարի համբաւին ու անոր վայելած պատիւին ու վարկին զովելի նախանձախնդրութեամբ, համբերատար ոգի մը երեսան կը բերեն եւ, նոյնիսկ զրկանքներու եւ զոհողութեանց գինով, կը դիմագրաւեն ամէն դժուարութիւններ, խորապէս գիտակցելով թէ անցեալին մէջ ալ այս Աթոռը անցուցած է բազմապիսի տագնապներ, ասկէ շատ աւելի ծանր, բայց ամէն անգամ աստուածային նախախնամութեան Աջը եւ Ազգին սէրը օգնութեան հասած են իրեն եւ թող չեն տուած որ Միաբանութիւնը ընկնուի եւ յուսահատութեան մասնուի:

Իսկ այժմ, հակառակ մեզ շրջապատող դժուարութեանց, ի պատիւ Միաբանութեան կարող եմ դարձեալ պարծանալով յայտարարել թէ Անոր աշ-

խասախրութեան եւ կարգապահութեան եւ դրուասելի ջանքերուն շնորհիւ
 տարւոյս ընթացքին Ս. Աթոռի վարչական մեքենան չունեցաւ ոեւէ խանգա-
 րում, Ս. Ուխտիս անդամները բնաւ եւ չմնացին իրենց նուիրական կոչումին
 պահանջած պարտականութիւններէն, Սուրբ Եկեղեցին պահեց իր վայելչու-
 քիւնն ու բարեգարգութիւնը, Տանարի բեմէն միշտ հնչեց Ս. Աւետարանի պատ-
 գամը, կրթական գործը երբեք չկասեցաւ, հոգեւորն շնույնները եւ բարեջան
 ուսուցիչները խղմօտէն ու լիովին կատարեցին իրենց պարտքը ու Ընծայա-
 րանը այս տարի ալ տուաւ իրմէ սպասուած հոգեւոր հունձքը ու Միաբա-
 նութեանս կազմին վրայ աւելցան վեց խոսսմնայից անդամներ, որոնք արդէն
 լծուած են զանազան պատշոններու, եւ Ս. Տեղեաց ու այս մեծ Հաստատու-
 քեան զանազան նիւղերուն մէջ սփռող ու աշխատող իրենց հոգեկից ու միա-
 բանակից երէց եղբայրներուն հետ հաւատարմաբար ու արեւանդն սկսած են
 արդէն իրենց ծառայութեան բաժինը բերել Ս. Աթոռիս: Գալով Տպարանին,
 քէն սիրող կացութիւնը մի քիչ դանդաղեցուց անոր գործունէութիւնը, բայց
 եւ այնպէս հոգ կը տարուի ՍԻՈՆ ամսաթերթը լոյս ընծայել կանոնաւորա-
 պէս: Մեր կողմէ կարգուած Խմբագրական Մարմինը գրեթէ տարիէ մը ի վեր
 կրցաւ արժանի բարձրութեան վրայ պահել Ս. Աթոռիս պատշոնաթերթը ու ոչ
 մէկ ջանք չխնայել լեցնելու համար մեր երանաւերն Պատրիարքին այդ մար-
 զին մէջ ալ թողած բացը:

Պատրիարքութեանս ենթակայ քեմերը եւս չեն դադրած մեր հոգածու-
 քեան առարկայ ըլլալէ: Անոնց վրայ կարգուած հոգեւոր շնույնները արեւ-
 անդն նուիրումով կ'աշխատին քեմականներու հովուութեան ու անոնց զա-
 ւակներու դաստիարակութեան գործին մէջ: Սուրբ Աթոռս իր ներկայ դժուա-
 րին կացութեան մէջ իսկ՝ ըստ առաջնոյն՝ կը շարունակէ ընձեռել իր բա-
 րոյական ու նիւթական նպաստները անոնց:

Այժմ՝ Նոր Տարիի սեմին վրայ կանգնած՝ ամէնուն միակ բաղձանքն
 է խաղաղութիւնը, վասնզի կայ դժբախտաբար պատերազմը, որ քէն ներ-
 կայիս սահմանափակուած է որոշ հակասներու վրայ, բայց կը սպառնայ
 ընդգրկել մերձակայ երկիրները ու տարածուիլ մինչեւ Արեւելք: Կայ բարե-
 բախտաբար նաեւ խաղաղութեան բաղձանքը ոչ միայն չէզոք, այլ եւ պատե-
 րազմիկ տէրութեանց մէջ: Մաղթենք որ քիչ ատենէն իրականանայ այդ բաղ-
 ձանքը, փարատի ամէնուն վրայ նեւոյ մղձաւանջը ու այս Նոր Տարին ըլլայ
 արեւոյսը տարիի մը բարօր ու երջանիկ:

Կրկնելով շնորհակալութիւնս արտայայտուած շնորհաւորութեանց ու
 մաղթանքներուն համար, եւ ալ փոխադարձաբար Ս. Աթոռիս պատուական
 Միաբանութեան եւ պատշոնէից, վարժարանաց բարեջան ուսուցիչներուն եւ
 ուսանողներուն, նաեւ մեր սիրելի Հայ ժողովուրդին ուղղելով խօսքս՝ կը շնոր-
 հաւորեմ Նոր Տարին ու արեւն բոլոր ջերմութեամբ կը մաղթեմ որ Բարձրեալն
 Աստուած իր նախախնամական Աջով հովանաւորէ Հայ ազգն ու Հայ. Ս. Եկե-
 ղեցին քէ՛ Հայրենիքին եւ քէ՛ Սփիւռքին մէջ ու Առաքելական Սուրբ Աթոռս՝
 իր սրբանուէր Միաբանութեամբ՝ պայծառ, բարեզարդ ու անաստան պահէ
 միշտ եւ յաւիտեան. Ամէն: